

ԲԱՆԱՎԵՃԵՐ ԵՎ ՔՆՆԱՐԿՈՒՄՆԵՐ ДИСКУССИИ И ОБСУЖДЕНИЯ

Խ. ԱՐՈՎՅԱՆԻ «ՎԵՐՔ ՀԱՅԱՍՏԱՆԻ»-Ի
ԳԱՂԱՓԱՐԱԿԱՆ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅԱՆ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐ

Վ. Ջ. ՂԱԶԱՐՅԱՆ

Արուսյանի դուրս-գործոցի մասին գոյություն ունեն տարբեր մոտեցումներ։ Հետազոտողների մի մասը «Վերք»-ը համարել է «ցարիզմի ներբող», իսկ մյուս մասը այն դիտել է որպես ցարիզմից զժգոհ հեղինակի ստեղծագործություն։

Շատ տարածված է այն տեսակետը, թե Արուսյանն իր վեպը ամբողջությամբ նվիրել է պարսկա-օսմանյան բռնությունները մերկացնելու և Ռուսաստանի ազատագրական դերը բնորոշելու զազափարներին։ Եվ քանի որ բոլոր այդ տեսակետի կողմնակիցների Արուսյանին խորթ է եղել երկու Ռուսաստանի դադափառը, ապա՝ «Վերք»-ի մեջ «Արուսյանն արտաշայտելով հայ ժողովրդի երախտագիտական զգացմունքները նրա ազատարար Ռուսաստանի նկատմամբ՝ սրբացնում էր այն ամենը, ինչ ռուսական էր, սկզբունքային տարբերություն չտեսնելով երկու հակադիր ուժերի՝ ցարիզմի ու ռուս ժողովրդի միջև»¹։

Խոսելով այն մասին, որ Արուսյանը զժգոհ էր ցարական կառավարությունից, ալառեմիկոս Աշոտ Հովհաննիսյանը գրել է. «Թվում է մեզ, որ հայտնի չափով այդ զժգոհության արգասիքներից մեկն է հենց «Վերք»-ը, որի հեղինակը, անբավական շինովնիկների գոռոզ... այլամերժ քաղաքականությունից, հիշեցնում էր ռուս նվաճողներին նրանց «ազատարար» նպատակները՝ շեշտելով միաժամանակ նաև «ազգի» ծառայությունները ռուս ղեկրի հաղթության գործում»²։

Հակադրելով Արուսյանին որպես «չափազանց զգայուն և սենտիմենտալ ջիդի» տեր անձնավորություն ներկայացնող հեղինակներին, պրոֆեսոր Վ. Պարտիզունին գրել է. «Վերք»-ն ավելի կովի կոչ է, քան ողբ»³։ «Հենց իր... պատմական ժանրով վիպասանը բողոքում է տիրող կարգի դեմ,—գրել է ալադեմիկոս Ա. Տերտերյանը,—ցույց տալով ժողովրդի սպասելիքները և դրանց փուլում, հակադրելով մոտիկ անցյալի խանդավառությունը և տխուր, անմխիար ներկան»⁴։

«Սակայն պետք է նշել,— իր հերթին գրել է բանասիրական Վիտուրյունների թեկնածու էդ. Թոփչյանը,—որ «Վերքի» մեջ համարյա բոլոր դեպքերում ռուսական ցարիզմի «ազատագրական» միսիան Արուսյանը մեծարում է միայն պարսկական բռնության համեմատությամբ»⁵։ Հետագայում, ցարիզմի նկատ-

¹ Ա. ր. տ. Ո ս կ ե ռ չ յ ա ն, Խ. Արուսյանի պատմական դերը. «Ուղեւորական գրականություն և արվեստ», 1948, N 9, էջ 59։

² Ա. չ. Հ ո վ հ ա ն ն ի ս յ ա ն, Խ. Արուսյան, Ե., 1933, էջ 32։

³ Վ. Պ ա ռ տ ի զ ու ն ի, Խ. Արուսյան, Ե., 1952, էջ 195։

⁴ Ա. Տ ե ռ տ ե ռ յ ա ն, Երկեր, Ե., 1960, էջ 101։

⁵ է. դ. Թ ո փ չ յ ա ն, «Վերք Հայաստանի» վեպի իդեական բովանդակությունը, «Խ. Արուսյան» ժողովածու, 1948, էջ 30։

մամբ Աբովյանի «հիացմունքը» հայ ժողովրդի երախտագիտության արտահայտություն համարելով, նա ավելացրել է, որ միաժամանակ այդ հիացմունքի մեջ նկատելի է դժգոհության և ցավի զգացում, հեզնանք, խոր հիասթափություն արտահայտված հակադարձ ձևով⁶:

Այսպիսով, պարսկա-օսմանյան բռնությունների մերկացում և ցարական կառավարության «ազատագրական» դերի ընդգծում ընկալվելուց բացի մի շարք ուսումնասիրողների կողմից «Վերք»-ը դիտվել է նաև որպես մի որոշ չափով ցարական բռնակալության դեմ ուղղված երկ: Մեր նպատակն է քննության առարկա դարձնել հարցի այս կողմը:

Ռուս ականավոր պատմավիպասան Ա. Տոլստոյը նշել է, որ պատմական վեպի պահանջը առաջ է գալիս մեծ բեկումների դարաշրջանում, և որ «յուրաքանչյուր գեղարվեստագետ, իր հայացքը դարձնելով դեպի անցյալը, նրա մեջ վերցնում և գտնում է միմիայն այն, ինչը իրեն հուզում է, որի օգնությամբ նա կարող է ավելի լավ հասկանալ իր ժամանակը»⁷:

Հիրավի, «Վերք Հայաստանի»-ն լինելով իր ժամանակաշրջանի հասարակական զարգացման պահանջը, ծնվեց որպես հայ ժողովրդի կյանքում տեղի ունեցած մեծ բեկումների հետևանք:

Ընդառաջելով նոր հասարակական կարիքներին, իրեն և ժամանակակիցներին հուզող հարցերին պատասխան տալու համար Աբովյանը ևս իր հայացքը դարձրել է դեպի անցյալը: Եվ «Վերք»-ի մեջ նրան ամենահուզող հարցը իր հայրենիքի դժբախտ ճակատագիրն է, նրա թշվառ ներկան: Բողենշտեդտին ուղարկվելիք տետրակում, որը բացառիկ նշանակություն ունի «Վերք»-ի ստեղծման պատմությունն ուսումնասիրելու համար, Աբովյանը գրել է. «Աղասուն ես անպայման ցանկանում էի մշակել իբրև ժողովրդական վեպ, որպեսզի դրանով օտարներին ևս ծանոթացնեի ժամանակակից հայ ազգության հետ»⁸: Այնուհետև նա շարունակել է. «Թող արդարադատ ժամանակակիցներն ու հաջորդները... իմանան, որ այս բոլորը ոչ թե իմ, այլ խեղճ ժողովրդի սիրո համար է, որ լույս աշխարհ հանելով, դնում եմ պատմության նժարին... աշխարհին ցույց տալու, որ հայերը վաշխառուներ չեն, ինչպես բարձրաձայն գոռում են նրանց մասին, որ նրանց մեջ էլ կան թաքնված շատ սուրբ զգացմունքներ, որոնք սակայն մինչև այժմ ոչ ոք չի շոշափել և, հետևաբար, չի էլ կարողացել ճանաչել»⁹:

Հանրահայտ փաստ է, որ յուրաքանչյուր երկի առաջաբանում հեղինակը բացատրում է գրքի նպատակը, գրելու շարժառիթները, հանդամանքները, աղբյուրները և այլն: «Վերք»-ի հռչակավոր առաջաբանից իմանում ենք, որ Աբովյանին երկար ժամանակ գիշեր-ցերեկ հանգստություն չտվողը, նրա սիրտը վառողը իր ժողովրդի կորցրած փառքի ու մեծության, ընդհանուր պատմության մեջ կատարած նրա հրաշքի, նրա արած քաջագործությունների վերհանման միտքն է:

Այրող այդ ցավն ավելի է սաստկացել մանավանդ այն բանից հետո, երբ օտար թերթերում ու գրքերում կարդացել է. «Թե Հայ ազգը պետք է՝ որ սիրտ

⁶ Տե՛ս «Գրական թերթ», 1961, № 189, էջ 4:

⁷ А. Толстой, Полное собрание сочинений, М., 1949, т. 13, էջ 311:

⁸ Աբովյան, Երկերի լիակատար ժողովածու, հատ. 7, էջ 391 (այսուհետև՝ ԽԱԵ, ԵԼԺ, հատորը և էջը):

⁹ Նույն տեղում, էջ 393:

չի ունեցած ըլի, որ էնքան բաները զխոսվն անց են կացել, մեկ մարդ էլա չի ուրիս եկել, որ մեկ սրտի բան պրի. ինչ կա եկեղեցու վրա յա, Աստծու ու սրբերի»¹⁰: Առաջարանից երևում է, որ նա շարունակ մտածել է գրել, պատմել «մեք երեւելի մարդկանց արած քաջագործությունները», իսկ շատ անգամ էլ, կավելացնենիք, ձեռնարկել է, բայց կիսատ թողել, որովհետեւ ինչպես ինքը վկայում է. «...ա՛խ, լեզուս փակ է, աչքս բաց, բերանս բռնած, սիրտս խոր, ձեռս պակաս, լեզուս կարճ, գանձ չունեի, որ գործով ցույց տայի ուզածս, անունս մեծ չէր՝ որ ասածս տեղ հասնի, մեր գրքերն էլ գրաբար, մեր նոր լեզուն էլ անպատիվ, որ սրտիս հասրաթը խոսքով հայտնեի»¹¹:

Այստեղ շափազանց զուսպ ձևով Աբովյանը ամեն ինչ ասել է. որ իր աչքերը բաց, ամեն ինչ իրենց գույնով ու տեսքով է տեսնում, բայց ցարական կառավարությունը բերանը բռնել, լեզուն փակել է, ու թեև սիրտը շատ խոր է, վերքը ցավոտ, բայց ձեռը պակաս է, ուստի և լեզուն կարճ, ո՛չ պաշտոն ունի, ո՛չ էլ կարողություն, որ խոսքը գին ունենա, կառավարության կողմից թույլատրվող լեզուն գրաբարն է, որը անհասկանալի է ժողովրդին, իսկ աշխարհաբար նոր լեզուն էլ որպես «ընդհանուրին, հասարակ ժողովրդին հասկանալի» լեզու Պետերբուրգի ակադեմիան մերժել և անպատիվ է արել:

Տակավին Դորպատում գրած պատմագիտական հոդվածներից երևում է, որ Աբովյանին մեծ ցավ է պատճառել այն, թե ինչպես եվրոպական և ցարական հետադեմ պատմագրության մեջ հայերը դիտվել են որպես ամենուրեք ցրբւթած և աշխարհի բոլոր մասերում թափառող, հայրենագուրկ առևտրականներ, որի հետևանքով նրանց կպցվել է «չարչիներ» (торгашн) արհամարհական պիտակը: Նա շատ է զայրացել այն բանից, որ եվրոպական գաղութարարներին արդարացնող և ռասայական տեսության կողմնակից որոշ ճանապարհորդներ ու պատմաբաններ հայերին շափազանց աննպաստ ձևով են ներկայացրել եվրոպական հասարակությանը: Նրա զայրույթը ավելի է սաստկացել մանավանդ այն պատճառով, որ Ռուսաստանում նոր առաջացող բուրժուա-ազնվականական ուղղության հետ միասին պաշտոնական հետադեմ պատմագրությունը, արտացոլելով ցարիզմի գաղութային քաղաքականությունը և հիմնավորելով կառավարության մեծապետական, մյուս ժողովուրդներին կլանելու պետական ծրագրերը, գործն այնպես է ներկայացրել, որ իբր փոքր ժողովուրդները չեն թունցել իրենց ինքնուրույն պատմությունը և Ռուսաստանի հետ միացումից հետո է միայն սկսվել նրանց լուսավորությունը:

Անհրաժեշտ էր պատմության կեղծարարներից պաշտպանել հայ ժողովրդի անարդարացիորեն ոտնահարված իրավունքները: Անհրաժեշտ էր արժանի հակահարված տալ նրա զրպարտիչներին, ինչպես նաև հայ ժողովրդի ձեռքը տալ ժամանակակից գիտության մակարդակին համապատասխան ձևով գրված իր պատմությունը, քանի որ հայր կարդալով այդ զրպարտիչների գրած գրքերը, ռատիպված է ամեն բան, ինչ հաղորդում է իր պատմությունը, համարել առասպել ու ավանդություն, և իր բարձր կարծիքը համաշխարհային պատմության մեջ ոչ նվազ կարևոր դեր խաղացած ազգի մասին փոխանակել մի փոքրիկ առևտրական խմբակով»¹²:

¹⁰ Նույն տեղում, հատ. 3, էջ 2:

¹¹ Նույն տեղում, հատ. 3, էջ 2:

¹² Նույն տեղում, հատ. 8, էջ 36:

Արժույթի ժամանակ զրպարտչական այդ քաղաքականության արտահայտություններից մեկը հանդիսացող կրոնական հետապնդումը՝ հայերի նկատմամբ այնտեղ էր հասել, որ թերթերում ու զրբերում բացարձակ նրանց անվանում էին «հերետիկոսներ», «հրեաներ», «չարչիներ» և այլն: Ըր հերթին այդ կրեույթի դեմ, հետադայում, անգամ Պոլոժենիկից հետո, բողոքեց նաև Ն. Աշտարակեցին: Պետերբուրգում կղած ժամանակ (1843) նա կառավարությունից պահանջեց, որպեսզի ոուսաց զրբերից և հատկապես զպրոցական դասադրբից հրամայեն հանել հայոց կկեղեցու դեմ «գծանրալուր բոսս»¹⁴:

Առերևույթ կվրոպացի միսիոներների, բայց փաստորեն ցարական կառավարության դեմ ուղղված նման մտքեր պարունակող հողվածների վրա ոտար ձեռքով արված ուղղումները և Դորպատի համալսարանի տարեգրբի խմրագրությունում երկու տարի ձգձգվելուց հետո դարձյալ նրանց անտիպ մնալու փաստը¹⁵ մեզ հիմք են տալիս ասելու, որ ցարական զրաքնության կողմից առաջին լուրջ հարվածը Արովյանը ստացել է Դորպատում: Այնուհետև մինչև «Վերբ»-ի ստեղծումը Արովյանը ցարական զրաքնության կրկրորդ, ցնցող հարվածը ստացավ իր դասադրբերի՝ «նախաշավիղ»-ի և տապախական քրականության տպագրության առթիվ, որի կապակցությամբ նա պարղ տեսավ, որ ցարական զաղտնի ոստիկանությունը ստվերի պես կրնկակոխ հետապնդում է իրեն¹⁶:

Սակայն ցարական կառավարության ոուսականացման քաղաքականությունը հայերի նկատմամբ միմիայն հավատի հարցերով չէր սահմանափակվում: Նույնն էր կիրառվում նաև ինչպես կայսրության մեջ մտնող փոքր մյուս ժողովուրդների, այնպես էլ հայոց լեզվի նկատմամբ:

Դեռևս Դորպատում կղած ժամանակ, տեղի համալսարանի պրոֆեսոր Կլոսեուսին Հովհաննես կաթողիկոսի զրած պատասխան նամակից (որը Արովյանի թարգմանությամբ լույս տեսավ համալսարանի Տարեգրբում), Արովյանը լավատեղյակ էր, որ Լուսաստանի ինը մեծ ու փոքր քաղաքներում զործող հայկական դպրոցներում կրոնից բացի դասավանդման միակ լեզուն ոուսերենն էր պարտադրված: Հետադայում նա ականատես կղավ հայկական դպրոցների ազգային բնույթի և մայրենի լեզվի զործադրման դեմ կառավարության կողմից ձեռնարկվող միջոցառումներին և բողոքեց զրա դեմ: «Կարելի է արղյոք 1-ին դասարանում սովորեցնել տեղացուն և՛ կարղալ, և՛ զրել, և՛ թվարանություն, և՛ խոսել, և՛ զատել ոուսերեն: Այղ չլսված ու չկղած բան է»¹⁷, — զրել է նա Անղրկովկասի դպրոցների վարչությանն ուղղած իր զեկուցազրում:

Ավելին, տեղական ժողովուրդների լեզվի ու մշակույթի զարղացմամբ մտահողվածության պատրանք ստեղծելու նպատակով ցարական կառավարությունը Անղրկովկասի արքունի դպրոցներում մտցնում է տեղական լեզուների դասավանդում: Անղամ այստեղ հայերենը տեղական մյուս լեզուների՝ վրացերենի և աղրբեջաներենի համեմատությամբ խտրական, անհավասար վիճակում է զրվել¹⁸:

¹³ Տե՛ս նույն տեղում, հատ. 10, էջ 310:

¹⁴ Տե՛ս Օրմանյան, «Աղզապատում», հատ. 3, էջ 3781:

¹⁵ Տե՛ս Արովյանի արխիվ, № 40, 96, ԽԱ ԵԼԺ, հատ. 8, էջ 416:

¹⁶ Տե՛ս մեր «Խ. Արովյանը և ցարական զրաքնությունը», ՀՍՍՐ ԳԱ «Տեղեկաղիթ» (հաս. գիտ.), 1965, № 9:

¹⁷ ԽԱ, ԵԼԺ, հատ. 5, էջ 196:

¹⁸ Մանրամասնությունները տե՛ս Սանթրոսյան Մ., Արեւելահայ դպրոցը XIX դ. առաջին կեսիւ, Ե., 1964, էջ 80 և հտ.:

Տակավին ուսանող ժամանակ էր Արովյանը դրել, որ եթե ոչ մի հուշարձան, ոչ մի պատմական հիմք չլինի ապացուցելու, թե Հայաստանում գոյություն է ունեցել մի ինքնատիպ, յուրահատուկ հնագույն մշակույթ, ապա այդ երկրի լեզուն ցայտուն և կենդանի կովան կարող է հանդիսանալ¹⁹։ Եվ ահա այդ վերջին կենդանի կովանի վրա իր դամկվյան սուրն էր կախել ցարական կառավարությունը։ Այդ պատճառով էր նա վառված սրտով գրի առնում. «Տեսնում էի, որ էլ Հայի գիրք ձեռն առնող, էլ Հայի լեզուն խոսող քիչ ա գտնվում։ Մեկ ազգի պահոզն էլ լեզուն ա ու հավատը, թե սրանց էլ կորցնենք (ասել է թե ինքնուրույն, անկախ պետականություն ունենալու կամ կազմելու հույսը արդեն կորցրել ենք, հերթը սրանց է հասել—Վ. Ղ.) վայն էկել ա մեր օրին։ Հայոց լեզուն առաջիս փոխելում էր Կրեսոսի նման, Երեսուն տարվա փակ բերանս Աղա-սին բաց արեց»²⁰։ «Ով թուր ունի, առաջ իմ գլխին խփի, իմ սիրտս խրի, ապա թե ոչ քանի շերտումս լեզու կա, փորումս սիրտ, ես լեղապատառ ձեն կտամ. «էդ ում վրա եք թուր հանել, Հայոց մեծ ազգին չե՞ք ճանաչում»²¹։

Իր պատմա-քաղաքական ողջ փիլիսոփայությունն արտահայտող սույն նշանարանով մտնելով եվրոպական և ցարական հետադեմ, աշառու պատմա-բանեկի դեմ անհավասար պայքարի ոլորտը, Արովյանի նպատակն է եղել վեր հանել համաշխարհային պատմության մեջ հայ ժողովրդի խաղացած նշանակալից դերը և ապացուցել, որ նա ես իր ազգային ինքնությունը փառավոր պատմությունն է ունեցել, ուստի և ուժ ու իրավունք ունի ապրել և համաշխարհային պատմության մեջ իր արժանի տեղը գրավել։

«Վերք»-ի մեջ Արովյանը դայրալից գրել է. «Թե մեկ երկիր պատմությունը կլասիկսկի է անվանում, այսինքն երեկի, արժանահիշատակ, էնդուր համար՝ որ մեծ բաներ ա անց կացել, էլ ինչ տեղ աշխարհումս էնքան երեկի բաներ են անց կացել, որքան Հայաստան, ...Թե սիրելի որդիքը պատմության նրանք են՝ որ շատ քաջություն արին, ոչինչ ազգ ուրեմն էնքան բրաբիոն (պարզե, մրցանակ—Վ. Ղ.), էնքան պսակ պետք է շատանար, որքան Հայք. բայց ի՞նչ անեմ՝ լեզուս կարճ ա, ձենս բարակ... անտեր ազգին ո՞վ (է) մտիկ տնում, աշխարս զոռովին ա գլուխ, վեր բերում ու պատմագիրքն էլ ըստ մեծի մասի Եվրոպացի ըլելով, իրենց ազգերին են առաջ քաշում»²²։

Արովյանի «Ի՞նչ անեմ՝ լեզուս կարճ ա, ձենս բարակ» արտահայտությունը պարզ ցույց է տալիս, որ խոսքը ցարական տիրապետության տակ իր և իր ժողովրդի իրավազրկության մասին է և ոչ թե պարսկական, ինչպես ընկալվել է «Վերք Հայաստանի»-ն։ Մի այլ տեղ դարձյալ միջամտելով նա հառաչել է. «Ա՛խ՝ հազար էսպես ցավեր կա սրտումս, ամա բերանս փակում են, չեմ կարում ասել»²³։ Ո՞վ էր նրա բերանը փակել «Վերք»-ը գրելու ժամանակ՝ 1841 թ.։ Համենայն դեպս, ոչ այլևս անդառնալիորեն պատմություն դարձած պարսիկ բռնակալները։ Նրա բերանը ցարական կառավարությունն էր փակել, որի դեմ բողոքելով նա գրել է. «էս ա, որ չիմիկ մեկ խաչապաշտ էլ մեր խեղճ ազգի հետն ընկած (թշնամացած—Վ. Ղ.) ման ա գալիս որ արինը ծծի ու հոգին

19 Տե՛ս ԽԱ, ԵԺԺ, հատ. 8, էջ 38։

20 Նույն տեղում, հատ. 3, էջ 5։

21 Նույն տեղում, էջ 6։

22 Նույն տեղում, հատ. 3, էջ 305։

23 Տե՛ս նույն տեղում, էջ 171, նաև էջ 247 և այլն։

հանի»²⁴։ Աբովյանի բողոքը ավելի հստակ ու դորեղ է մանավանդ այնտեղ, ուր գրել է. «Հայի սրտի տակին, շատ շնորհք, գործություն, շատ լավություն կա բայց քարը վերցնել ու, սիրտը բանալու տեղ խցկում են բերանն, որ էսքան բա-րին չնչվի, փշանա, Հայ անուն չլինի»²⁵։

Ո՞վ էր հայ անունը ջնջել Աբովյանի սույն տողերը գրելուց քիչ առաջ։ Ցա-րահան կառավարությունը՝ 1840 թ. ապրիլի 10-ի իր օրենքով։ Նա էր վերաց-րել միակ հայ անուն հիշեցնող Հայկական մարզը՝ հայերի ակնկալած ինքնա-վար պետականության այդ ծաղրանկարը։

Աբովյանը բողոքում էր այն բանի դեմ, որ ցարական կառավարությունը, փոխանակ հայերի ակնկալությունները կատարելու և հայ ժողովրդի արժանիք-ները, ինչպես նաև իր զենքի հաղթանակին մատուցած նրա ծառայությունները զնահատելով նրանց ինքնավար պետականություն շնորհելու, այժմ հայերի նկատմամբ հալածանքի ուղին էր բռնել։ Այդ իսկ պատճառով նա հույսը դնում է անաչառ պատմագրի վրա, որը չէր կարող պատմության կեղծարարներն նման անտեսել Քարեզակի պես լիս տվող» այն քաջագործություններն ու հա-վատարմությունը, որ ցուցաբերում էին հայերը Ռուսաստանի նկատմամբ։ Այդ նույն լավատեսությունն է նրան հույս ներշնչել գրելու, թե «պատմությունը, անհավատարիմ պատմությունը՝ որ հայի համար պապանձվել ա, մեկ օր կասի, ու թե նա չասի, ու էն ազգերին միայն գլուխ վեր բերի ու անարգաբար կեղծա-վորությամբ տակը մտնի, որ թագավորություն ունին ու պատմություն գրողին կամ պարզև, կամ պատիժ կտան, երկնային բեմը ցույց կտա (որ) Հայոց քաջ որդիքը՝ որ երկու հազար տարուց ավելի իրենց արնովն, իրանց թրի գոռովն, ու հավատովը իրանց գլուխը պահեցին»²⁶։ Մի ուրիշ տեղ նա գրել է. «Խե մենք լուենք ու բազի անասոված, անօրեն հոգի... չամաչի էստեղ, էնտեղ գրքում կամ կազեթում, հալի միսը ծամի, քարինք կաղաղակեն, սարերը կվկայեն, ու ամենաողորմած կայսեր հրովարտակներն ու շնորհակալությունն, խաչերն ու նշաններն, թոշակն... ու պարգևներն՝ որ շատ անգամ մինչև էդին գլուղացին էլ ստանում էր, թող սուր դառնան էնպես կույր աչքը մտնին՝ որ հայի դադրը լավ իմանա և մեր արածը... չսեացնի իր սև հոգովը, իր անհոգի շնչովը»²⁸։

Վերը տեսանք, թե հայերին գրքերում ու թերթերում զրպարտելը ինչ աղ-բյուրից էր բխում, ուստի պարզ է, որ Աբովյանի բողոքը ցարական կառավա-րության դեմ էր և «Վերք»-ը գրել է հատկապես հայերի ծառայությունները ցու-ցադրելու համար, որպեսզի դրանք սուր դառնան ու երախտամոռ մարդկանց աչքերը մտնեն։ Այդ է առյաճուցում նաև այն հանգամանքը, որ սևագիրը մաք-րագրելիս Աբովյանը հանել է ինչպես հայերին գրքերում ու թերթերում զրբ-ույարտելու մասը, այնպես էլ «թող սուր դառնան էնպես կույր աչքը մտնին» սուր արտահայտությունը, որովհետև ժամանակի մտավորականությունը հայտնի բան է եղել, թե խոսքը ում է վերաբերում, ուստի վտանգավոր համարելով խմբագրել է²⁹։

24 Նույն տեղում, հատ. 2, էջ 85։

25 Նույն տեղում, էջ 61։

26 Նույն տեղում, հատ. 3, էջ 304։

27 Նույն տեղում, էջ 305։

28 Նույն տեղում, էջ 304։

29 Համեմատիր նույն տեղում, 304 և 121 էջերը։

Քաղաքական նույն նպատակասլացությունն է դրդել Աբովյանին՝ շրջանցելու իր նախասիրած Վարդանանց պատերազմների կամ Բագրատունյաց հարստության ժամանակաշրջանները և իր երկի համար թեմա ընտրել պատմական տեսանկյունից ժամանակակցի համար չափազանց դժվար գնահատելի իր ապրած ժամանակաշրջանը: Աբովյանը այդպես է վարվել, որովհետև հայոց պատմության խոր անցյալից նյութ վերցնելով, նա հնարավորություն չէր ունենա ուսական զենքի հաղթանակի գործում հայերի մատուցած ծառայությունները Երպես շոնդալից ապտակ խփելու ցաւական գաղութարարների երեսին. նրանց հիշեցնելու, որ հայ ժողովուրդը իր հույսերի մեջ խաբված է, որովհետև նրա այսօրը այն չէ, ինչ նա ակնկալում էր պատերազմի օրերին:

«Վերք Հայաստանի»-ի երրորդ գլուխը Աբովյանը նվիրել է Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի տիրապետության տակ անցնելու դեպքերի նկարագրությանը: Այստեղ է, որ նա իր գազաթնակետին է հասցրել երկի սկզբից ծայր առնող և ուս-պարսկական պատերազմի ժամանակաշրջանում հայ ժողովրդի մեջ լայն տարածում գտած ժողովրդա-աղատագրական մեծ խանդավառությունը: Դրանով նա շեշտել է այն գաղափարը, որ ուս-պարսկական վերջին պատերազմի ժամանակ ուսական զենքի հաղթանակին մեծապես օգնողը հայերն են եղել, մինչդեռ դրա դիմաց նա այսօր ոչ միայն ըստ արժանվույն չի գնահատված, այլև արհամարված ու զրպարտված, իր ազգային ինքնուրույնությունը կորցնելու վտանգի առաջ է կանգնած: Հենց «Վերք»-ի մեջ Աբովյանի դրած բազմաթիվ նպատակներից մեկը հերոսական փառավոր անցյալ ունեցող ժամանակակից հայոց «ազգին» աշխարհին ծանոթացնելն ու այդ միջոցով աղ-դային դիմազրկման վտանգից նրան փրկելն է եղել: Իր երկը պարսկական բռնակալության դեմ ուղղած հեղինակը ոչ թե հայ ժողովրդի անցյալի ապա-ճանաչվածության կամ լեզվի վրա կախված վտանգի հարցը կդնէր, այլ այդ ժողովրդի ֆիզիկական գոյության ապահովության: Պարսկական բռնությունների ու սարսափների վարպետ նկարագրությունները Աբովյանը տվել է միմիայն մի նպատակով՝ ստեղծվել դրությունների և հակադրությունների անմիջական մեթոդ, որպեսզի այդ միջոցով ընկալման ցածր մակարդակի տեր «հարիր հազարների» համար ցցուն դարձնի պարսկական անտանելի ռեժիմը և ուսական տիրապետության շրջանի տանելի դրությունը: Նման մի հակադրություն է նրա «Սոխն ու սխտորը» առակը, ուր նրանց սկսած վեճը ընթերցողին բերում է այն հետևության, որ սոխը թեև սխտորից այնքան էլ քաղցր չէ, նա էլ կծու է, բայց և «գոնե եփելիս իր հոտը քաշում է», այսինքն նրանից մեղմ է, տանելի է: Այս ֆոնի վրա է շարադրել նա իր «Վերք»-ը: Նրա մեջ Աբովյանը «ջանը սարսուղ» և «միսը վեր թափող» պարսկական բռնությունները նկարագրելուց անմիջապես հետո միջամտել և փառք է տվել «ոսի օրհնած ոտին» ու պատվիրել, որ «գիշեր ցերեկ մեր քաշած օրերը մըտքըներս բերենք ու Ռսի երեսը տեսնելիս՝ երեսներիս խաչ հանենք»³⁰:

Աբովյանը ուսական տիրապետությունը գնահատում էր ոչ միայն այն պատճառով, որ հայ ժողովուրդը փրկվել էր ֆիզիկական բնաջնջման վտանգից ու կյանքի անապահովությունից, այլ նաև այն տեսակետից, որ բոլոր թերու-թյուններով հանդերձ հայերի համար ստեղծվել էր ազգային համախմբման մի օջախ: Այդ տեսանկյունից էր նա ելնում, երբ գրում էր. «Հիմիկ հավատո՞ւմ ես՝

30 Նույն տեղում, էջ 58:

այ իմ խեղճ աղգ, թե քո երկրումը բյուր չսպես քաղաք... սուրբ քաշվեցին, ու քեզ չոր քարեր մենակ թողեցին, որ տեսնիս ու լաս, տաս քո զլխին վայ, խելքդ ժողովես, լինիս կտրիչ Հայ, Ռուսաց հզոր քաջ ձեռքի տակին փոքր դինջանաս ու քո աշխարհին մուղայիթ կենաս, արյունդ թափես, քո աղղր պահես, քեզ անուն ճարես»³¹։

«Ռուսաց հզոր քաջ ձեռքի տակին փոքր դինջանալու» ժամանակ անգամ Աբովյանը հայերին կոչ է անում խելքի գալ՝ մեքջ-մեքջի տալ, համախմբվել ոչ միայն «ազգի» ներսում, այլ նաև հարևան և ուս ճնշված ժողովուրդների հետ, որովհետև այդ ժամանակ էլ «ազգը պահելու» և «անուն ճարելու» համար պետք է «մուղայիթ կենալ», զգուշ լինել և «արյուն թափել»։

Տեսական ժամանակ պահանջող հայոց վերքն ամոքելու համար անհրաժեշտ էր հավատ բարեկամություն ուս և հարևան ճնշված ժողովուրդների հետ։ Այս էր Աբովյանի խորապես ճշմարիտ կողմնորոշումը, և այդ պատճառով նա ստվերի տակ թողնելով պաշտոնական Ռուսաստանը, իր «Վերք»-ն ավարտել է ճնշված այդ ժողովուրդների մի բազմիմաստ և հոյակապ պատկեր-փոխարկ-րուբյամբ։ Աբովյանի ժամանակ հավասարապես վտանգավոր է եղել ինչպես ցարիզմի, այնպես էլ ուս ժողովրդի մասին բացահայտ արտահայտվելու։ Որովհետև ցույց տալու համար, որ իբր կառավարության և ժողովրդի միջև շահերի տարածայնություն չկա և որ կրոնասիրությանն ու ինքնակալության նկատմամբ հավատարմությունը եղել է և է ուս ժողովրդի ազգային հատկանիշը, պաշտոնական զաղափարախոսության կողմից միտումնավոր կերպով դրանք անբաժանելի միասնություն էին հայտարարված։

Ահա թե ինչն է ստիպել Աբովյանին հայ, ուս, վրաց և ադրբեջանական ժողովուրդների բարեկամության, նրանց միասնության կարևորության մասին իր խոհերը ոչ միայն «Վերք»-ից տեղափոխել նրա հավելված «Ջանդի»-ի մեջ, այլև այստեղ էլ դրանց մասին խոսել այլաբանորեն, Քոի, Արաքսի, Կասպից ծովի և Վուգայի սիմվոլիկ պատկերներով։

Աբովյանին շատ լավ հայտնի էր ցարական կառավարության «բաժանիր, որ տիրես» քաղաքականության կիրառման գործում կրոնի խաղացած անգնահատելի ծառայությունները և այդ պատճառով էր ի խորոց սրտի գրի առնում «Ով կույր հավատ, որ խեղճ մարդի սուրբ հոգին չանկղ ես քցել, ու պատառոտում ես, կեղևում...», բայց ինքը չի իմանում — որովհետև անունդ սուրբ ա, գորությունդ շատ»³²։ Կամ՝ «Կրոն, կրոն, որ ռամիկը՝ անունդ չիմանալով, քեզ եւավատ ու օրենք ա ձեն տալիս, քեզ դիմ ու մասաք կանչում»³³։

Ճնշված ժողովուրդների միասնության անհրաժեշտության մասին Աբովյանը խոսել է իր բոլոր ստեղծագործությունների մեջ։ «Վերք»-ում նա ակնարկի ձևով նշել է, որ Արաքսը գնա Կասպից ծովում միանա Քուռին ու «Ռուսաց նավերը իրանց քամակի վրա տանին ու բերեն, որ ճամփեն չհուսահատվի, չբեզարի, ու էն իր բարի ոտը մեր աշխարհիցը չկտրի, որ բալքի մեր հայրենիքը՝ նրանց արծվի թևերի տակին գորանա, մեծանա, դարդերը մոռանա ու էլ եղ՝ իր առաջին փառքին հասնի»³⁴։

31 Նույն տեղում, էջ 160։

32 Նույն տեղում, էջ 254—255։

33 Նույն տեղում, հատ. 4, էջ 32։

34 Նույն տեղում, հատ. 3, էջ 114։

Հայաստանի վերաբերյալ քաղաքական իր հեռանկարների մասին «նախա-
շավիղ»-ում նա երեխաներին հասկանալի ձևով գրել է. «Այժմ մենք Ռուսաց
հզոր տերության տակին ենք: Նրա շնորհիւ և ողորմությունը մեզ վրա շատ է:
Այսուհետև պետք է ջանք անենք, որ ավելի ևս լուսավորվինք, մեր լեզուն, մեր
հայրենիքն պայծառացնենք: Թե՛ն էս սրտովը կշարժինք, շուտով էլի մեր առաջի
փառքին կհասնինք»³⁵:

Այսպիսով, ժողովուրդների միավորման անհրաժեշտությունը Աբովյանը
ըմբռնում էր որպես նրանց ստեղծագործ աշխատանքի համար խաղաղ պայ-
մաններ ապահովող հանգամանք և ընկալում որպես երկրի ծաղկմանն ու մարդ-
կային առաջադիմությանը նպաստող անհրաժեշտ գործոն, որ սատարելու էր
հայ ժողովրդին, որպես իր առաջվա տնտեսական, քաղաքական և մշակութա-
յին ինքնագործունեությունը ապահովելու միջոց:

Աբովյանը իր ժամանակակիցներին միավորվելու, խելքի գալու կոչ էր ա-
նում, որովհետև հայոց «հազար տարվա յարեն դեռ չի սաղացել»³⁶ հայոց վերքը
սպիանալու փոխարեն վտանգավոր ձևով շարունակում է իր մորմոքը: «Մեկ օր
ծնվել ենք,—դրել է նա «Վերք»-ում,—մեկ օր էլ պետք է մեռնենք,—ամա էս
յարեն, քանի որ չի սաղացել, շատ շատ մարդի քրքրած մատված հողը կդնի:
...Հիմիկ էլ բազի աղա, բազի հաստափոր իշագլուխ իշխան, բազի գոգրեն լի-
քը (գրել է՝ շինովնիկ, բայց հասկանալի պատճառով ջնջել): հեր իրանց զուռնեն
են գիշեր ցերեկ... փշում... «Ի՛նչ ա Հայի լեզուն... Աստուծով հինգ տարուցը
եղր՝ էլ ոչ Հայ կրտսնիս, ոչ Հայի անուն կլսես, դրանց քոքն էլ կտրվի, Հայի
անունը՝ որ վրես չէր էլել, ես գիտեմ՝ թե ինչ տեղ կճարեի, ինչ փառքի կհաս-
նեի, քանի խաչ ու կավալեր կճարեի»³⁶ և այլն: Ում ում, բայց Աբովյանին շատ
լավ հայտնի էր, որ ազգութային պարսիկները բեկություն ու նայիրություն,
խանություն էին խոստանում և ոչ թե ողոսական աստիճանավորության համար
սահմանված խաչ ու կավալեր:

«Հիմիկ էլ հո՛ մեկ... փսլնքոտ... էրեզվան լակոտը դունչը ցցել,— շարու-
նակում է Աբովյանը մի այլ տեղ,—դամաղ (արծանի—Վ. Ղ.) չի անում՝ իր լե-
զուն խոսի... հենց էն ա հաշում՝ «թե հայվարայ, այսինքն հայերեն, չեմ գիտի,
լեզուս չի բռնում, կոշտ լեզու, փիս լեզու ա... փրոգուլիվաթսա արի... ինձ
փրեիքրաթ արին», աչքդ էլ հանեցին շան ծնունդ: Ռուս ես, ուսերեն խոսի,
թուրք ես, թուրքերեն... Հայի լեզուն իր բառն ունի ...Որ քո լեզուն էլ գիտենաս,
քո լեզուն էլ խոսիս, ուսն՝ հացդ ձեռքիցդ կխլի՝ Քեզ Սիրիբ կղրկի»³⁷:

Սույն մեջբերումները ցույց են տալիս, որ ցարիզմն իր ողոսացման քաղա-
քականությունը այնպես արագ ու վայրենի կերպով էր իրագործում, որ Աբով-
յանին թվում էր, թե մոտ ապագայում հայկական խոսք չէր հնչելու Հայաս-
տանում: Այդ տեսակետից էլ նա ոչ մի արդարացում չի գտնում նրանց նկատ-
մամբ, ովքեր բարձր դիրք ձեռք բերելու ակնկալությամբ ընդառաջում են ցա-
րիզմի ազգակուլ քաղաքականությանը: Դրանում համոզվելու համար բավական
է մի թուլեցիկ համեմատություն անել «Վերք»-ի սևագրի ու մաքրագրի միջև:
Այդ ժամանակ է միայն երևում Աբովյանի սև աշխատանքը և զգացվում ժո-
ղովրդին հասկանալի դառնալու համար նրա ապրած ստեղծագործական եր-
կունքը:

35 Սույն տեղում, հատ. 5, էջ 88:

36 Սույն տեղում, հատ. 3, էջ 236—237:

37 Սույն տեղում, էջ 238:

Տողերի արանքից Արուստանի ժողովրդին կոչ է արել դարավոր քնից սթափվել, լուսավորվել, բոնության շղթաները թոթափել: «Վերք»-ի մեջ Աղասու խոսքը կիսատ թողնելով, Արուստանը սկսում է միջամտել ու ժողովրդի լուսավորության, նրա տղետ մնալու մասին խորհրդածություններ անել: Վերջում ավելացնում է. «Ամենքս էլ դիտենք՝ թե (ժողովրդի խավար մնալը—Վ. Ղ.) ում մեղքն ա, ամա հիմիկ խոսալու վախտը չի, եղո կասեմ»: Սա հեղինակի հնարքն է, որով ընթերցողին նա հասկացնում է, որ ամեն ինչ պարզ ասելը վտանգավոր է: Բայց այնուամենայնիվ խիզախելով շարունակում է. «Ի՞նչ ա-սեմ, իմացողն իմացալ ու անկաջի տակն էլ լալքի քորեց. բայց անկաջի տակը քորելով՝ փոր չի կշտանալ, լավ է մեկ օր առաջ իր բանը կարգին բռնիլ ու շա-սել՝ «էքուց, էքուց». էքուց էլ էս օրվանից ա, ընչանք էքուց, էլ օր կըքցենք մեր բանը՝ գելը սուրուն կտանի, ով անկաջ ունի, լսի, թե չէ ոտը քարին կառնի»³⁸:

Այս ինչի՞ մասին է գործը օր առաջ կատարելու, վաղվան չգցելու Արուստանի ակնարկը, եթե ոչ գիմաղրելով իշխողների քաղաքականությանը՝ ջանք անեն ազգապահության:

Իր զգացմունքները Աղասուն վերադրած³⁹ և նրա միջոցով արտահայտվող Արուստանի «Վերք»-ի ստեղծագործման ճանապարհին Աղասու շուրջը հորինել է բազմաթիվ չափածո ստեղծագործություններ: Բայց նա տեսել է, որ այդ ձևով ևս ինքը ժողովրդին անհասկանալի է մնում: Երկար մտորումներից հետո վերջնականապես գտել է իրեն հանգստություն չտվող մտքերի ու զաղափարների արտահայտման՝ դյուղացու պատմվածքով իր պատմությունը շարադրելու եղանակը և այդ մասին գրել. «Ինձ համար այնքան հիշարժան 1841 թ. բարի-կենդանին սկսեցի իմ պատմությունը այն ձևով, կարծես մի հայ դյուղացի պատմելիս լիներ իր հարեանին»⁴⁰:

Արուստանի համար, հերավի, այդ տարեթիվը հիշարժան է եղել, որովհետև արտահայտվելու, գրելու այդ եղանակը նրան հնարավորություն է տվել. նախ՝ հասկանալի լինել այն «հարիր հազարներին», որոնց համար նա դիշեր ցերեկ հանգիստը կորցրած գրում էր, որպեսզի կարդացողը չիմանա թե ինքը գիրք է կարդում, այլ կարծի թե մի մարդ է խոսում իր հետ (նալրանդյան):

Երկրորդ՝ միաժամանակ մի քանի պատմություններ անել և դրանցով դա-դափարներ հաղորդել: Այն է՝ ա) հայոց անտանելի մոտիկ անցյալը հակադրել համեմատաբար տանելի ներկային և ցույց տալ ստեղծված պայմաններում հայ ժողովրդի բռնած ուսական կողմնորոշման ճշմարտացիությունը. բ) վեր հա-նել ցարական զենքի հաղթանակի գործում հայերի մատուցած ծառայություն-ները, վերականգնացնել պատերազմի օրերին հայ ժողովրդին համակած մեծ խանգավառությունը և այդ բոլորը հակադրել նրա ներկա հուսախար թշվառ վիճակին. գ) վեր հանել հայ ազատագրական շարժման հին ու նոր անցյալի փառավոր դրվագները և Աղասու օրինակով իր ժամանակաշրջանի ճնշումնե-րին համակերպված ու արիությունը կորցրած մարդկանց խիզախություն, բռնա-կալության դեմ կռվելու և իրենց հայրենիքում տիրոջ արժանապատվությամբ ապրելու ոգի ներշնչել. դ) վեր հանել ստրկացնողների դեմ հայ ժողովրդին հա-տուկ կորովի թուլացման գործում եկեղեցու խաղացած կործանարար դերը և

³⁸ Նույն տեղում, էջ 11:

³⁹ Նույն տեղում, հատ. 7, էջ 392:

⁴⁰ Նույն տեղում, էջ 391:

ատելություն սերմանել եկեղեցականների քարոզած հնազանդության պատգամ-ների դեմ:

Երրորդ՝ իրագործել իր գլխավոր նպատակներից մեկը՝ հնարավորության սահմաններում ժողովրդին հասկանալի լեզվով իր ասելիքը ասել, նրան հասկացնել, մատչելի դարձնել: Պարբերաբար կիսատ թողնելով հայ ժողովրդի նախկին ճշդողների բռնությունները մերկացնող իրր իր հիմնական պատմու-թյունը, «Վերք»-ի մեջ Աբովյանը ծրագրված ձևով միջամտել է դեպքերին ու ժամանակի չարող հարցեր արծարծել: Այդ ձևով նա առիթներ է ստեղծել և բարձրաձայն խորհրդածել այն մասին, որ «խեղճ ազգի հոգին մինչև էսօր քա-ղել են, հազար տարվա յարա ունի սրտումը, որ դեռ (ասել է՝ ցարական տի-րապետության տակ—Վ. Դ.) չի սաղացել: Էնքան դառն արտասուք ա կուլ տվել, որ ոչ աչքումը լիս կա, ոչ բերնումը համ, ոչ սրտումը եղ. դու հենց ուզում ես՝ որ էստոնք մեկ սհաթումը անց կենա, ի՞նչպես կրլի»⁴¹: Ինչպես նկատում էր Աբովյանը, «դարավոր ստրկությունը... զինաթափ է արել հայերին և նրանց վրա թողել անվճռականության կնիքը, և շատերի մեջ առաջացրել զզվանք դե-պի զենք կրելը»⁴²: Դրա համար էր նա հառաչելով գրում. «Փետի տակին են մե-ծացել—ի՞նչ կանես. ոչ հավատ ա մնացել, ոչ սեր, որ մեկ օր... խոսքը մին անեն, քամակ քամակի տան, իրանց աշխատանքն, էրեխեքն... ազատեն: Էն վաղ էր, որ էշը կաղ էր...»⁴³: Արդ՝ անցել են այն ժամանակները, երբ հայերը և՛ հույս ունեին, և՛ սեր, և, որ ամենագլխավորն է, ուժ ու կորով՝ իրենց ստրկաց-նողների դեմ սուր բարձրացնելու համար: Այն ժամանակվա հայերին հատուկ արիությունից այժմ ոչինչ չի մնացել, որովհետև «հիմիկ Հայի կես լեզուն Խուր-բի ա. կես հոգին Պարսիկի, կես սիրտը Օսմանցվի, կեսը Քրդի», իսկ որևէ հա-մարձակ խոսք «որ ասում ես, դողում են—ափալ թափալ քեզ մատնում—քո գլուխը կտրիլ տալիս»⁴⁴: Երկարամյա քաղաքական կաթվածահարության հե-տևանքը այնքան ուժեղ է հայ ժողովրդի վրա, որ ազատամիտ մի բառն իսկ մեծ հանդգնություն է թվում շրջապատին և տեղիք տալիս քսության: Սա էր Աբով-յանին տանջող ցավը՝ հայ ժողովրդի վերքը, որի ամոքումը, նրա կարծիքով, «մեկ սհաթի» գործ չէ. «դարավոր վերքերը շատ խորն են լինում, և հեշտու-թյամբ ու արագ չեն բուժվում, այլ դարձյալ դարբերով»⁴⁵,—գրել է նա: Այդ պատճառով էլ բանը պետք է հիմքից՝ ժողովրդին լուսավորելու գործից սկսել, որովհետև «անվարիլ հողը թե ցանեցիր, դուրդ ու դուշը կուտի սերմդ: Առաջ մեկ վարիր, հիմքը քցիր, մեկ ազգի աչքը բաց արա. դուզ ճամփեն որն ա, էն ճամփովը տար... Հայոց ազգի ջանին դուրբան՝ մեկ նրա երեխին ուսում տուր, նրա էն լուսաթաթախ հոգին կրթիր, կրթիլ եմ ասում... գլխիցը դուրս տալ՝ չեմ ասում ու շարական, փոխ, յա շիլափլավ ուտիլ սովորեցնել, որ մեզ էս-տեղն ա քցել»⁴⁶:

Հայ ժողովրդին «էստեղը քցելու» համար է Աբովյանը դատապարտում կրոնավորներին ու նրանց մատակարարած գիտությունն ու դաստիարակու-թյունը: Նույն այդ պատճառով է նա գրել. «Եթե մեր ազգը... քրիստոնյա չէր

41 Նույն տեղում, հատ. 3, էջ 61:

42 Նույն տեղում, հատ. 7, էջ 200:

43 Նույն տեղում, հատ. 3, էջ 251:

44 Նույն տեղում:

45 Նույն տեղում, հատ. 7, էջ 171:

46 Նույն տեղում, հատ. 3, էջ 61:

էլել՝ էս օր էլ մեր թագավորությունը հաստատ կլինեն»⁴⁷։ Ինչո՞ւ Որովհետև դարեր ի վեր նրանք ժողովրդին քարոզում են՝ «Հնազանդ լեռով քաղաութեաց, զի Աստուծոյ ևն կարգեալ» ... ու այլ տեսակ կմտածի, անհավատ ա ու դժոխքի բաժին... Քրիստոնէն սրով չի պետք է՝ իր բանը յուր տանի։ Նրա թուրը իր համբերությունն ու հավատն ա, ... հա կասեն, հա ասենք. չէ կասեն, չէ ասենք. կասեն՝ նստիր, նստինք, վեր կաց՝ վեր կենանք ... էլի եմ ասում, քրիստոնէն թրի կոթն էլ ձեռ չի պետք է առնի, կարճ, որ քար էլ աղան զլխին»⁴⁸։

Հաշվի չառնելով գրաքննական կաշկանդումները, Աբովյանը պոռթկացել, ծանոթագրության նշան է դրել հայ եպիսկոպոսի այդ քարոզի վրա ու տողատակ ավելացրել. «էս խոսակցությունիցը իմացողը կիմանա, թե ինչ էր մեր խեղճության պատճառը։ էլ ես չեմ ուզում բերանս բաց անիլ։ Ինչ ավետարանի կողքին գրած ա, սուրբ ա, բեր հասկացողը, էն ժամանակը զլխիս խփիր»⁴⁹, ասել է՝ ավետարանի մեջ բոլորը չէ, որ մարդկային բանականությանը ըմբռնելի է։ Հայոց «խեղճության պատճառը» միայն դարավոր բռնակալությունը չի եղել, այլ նաև բռնակալներին իսկույն հարմարվող և նրանց շահերը պաշտպանող հայ եկեղեցին։ Այս էր Աբովյանի զսպված խոսքի իմաստը։

Այդ պատճառով էր նա փնտրում «Մեր ծեր սուրբ պապին»՝ Լուսավորչին, որ այդ բոլորի համար նրան բողոքի, թե «է՛նչի՛ մեր տունը էսպես քանդեցիր մեզ սրի, թրի դու բաժին տվիր... Ինչպես մեր թուրն դու ձեռից խլեցիր, Եղ տուր պապի ջսն՝ քո միրքիդ մեռնիմ... Տուր որ եղ տանիմ, եղ տամ իմ ազգին, Որ թե մեզ սպանեն, մենք էլ սպանենք... Մեզ թրով խփողին, թուրն սրտումը ցցենք, Մեզ կրակ տվողին, իրան զլխի վրա քցենք»⁵⁰ և այլն։

Որպեսզի ընկալման ցածր մակարդակի տեր «հարիր հազարներին» ավելի հասկանալի լինի, որ դրանք իր մտքերն են, նա շարունակ դիմել է ընթերցողին «Ես եզ եմ դառնում, էլի իմ պատմությունն անեմ» (ԽԱ, ԵԼԺ, հատ. 3, էջ 55), «Սիրելի կարդացող... լավ չի սկսած բանը թողալ ու էսպես քարոզ ասիլ, ես էլ դիտեմ, ամա սիրտս չի դիմանում» (էջ 60), և այլ⁵¹ ձևերով, որ նշանակել է, թե սրանք ոչ մի կապ չունեն անցած դնացած ժամանակների մասին իմ անելիք պատմության հետ, իմ խոսքը մեզ վառող էսօրվա ցավերի մասին է։ Բայց ցարական գրաքննության կողմից հասկացվելու չափի զգացումը չկորցնելով, Աբովյանը հաճախ որոշ հատվածներում մտքերը այնպես է շարադրել, որ դժվարանում ես հերոսի և հեղինակի խոսքը իրարից զանազանելի⁵²։ Սա իր ուզած ձևով պատմություն գրելու և ազատ հրապարակախոսելու հնարավորություններից զրկված Աբովյանի գրելաձևի ամենաբնորոշ կողմն է, նիկոլաևյան գրաքննական դաժան խոչընդոտները հաղթահարելու և գրաքննիչներից աննկատ մնալու միջոց։ Տարբեր առիթներով նա հայտնել է, որ ցարական կառավարության դեմ իր սկսած պայքարի կապակցությամբ շատերն են իրեն զգուշացրել հեռու մնալ։ Մեկն ասել է. «Ում բանն ա հիմիկ կտրվել՝ որ թուղթ ու թանաքի հետևիցն ընկնի։ Ա՛յ տղա՝ բերանդ քեզ արա, այ աման զլխիդ փորձանք կզա», մյուսը թե՝ «Վարժապետ, քո ամանը կսիրես, օրը գնացել ա, խաթեն մնացել, դու մեկ

47 Նույն տեղում, հատ. 5, էջ 88։

48 Նույն տեղում, հատ. 3, էջ 84։

49 Նույն տեղում։

50 Նույն տեղում, հատ. 2, էջ 87։

51 Տե՛ս նաև՝ Նույն տեղում, հ. 3, էջ 58, 60, 62, 65, 126, 184, 196 և այլն։

52 Նույն տեղում, էջ 245—47, 251—52 և այլն։

մղղսի, ճգնավոր մարդ ես: Դու ո՞վ, կոիվ, դավեն ո՞վ»⁵³, մի երրորդը թե՛ «Մեր տղա՝ չծիծաղաս. լավ չեն ասիլ, ամոթ ա. կարելի ա մեկ քացախած ճամփորդի քեֆին դիպչի, տրտինգ անի, փալանը շուռ տա, հետո տուր ու զմփոցը քո գլխին գա»⁵⁴, կամ սեւագրում գրել է՝ թե իրեն զգուշացրել են, որ «էս կապը կտրած արջին-էս կատաղած գիլին-էս նենգավոր օձին-էս թոկից փախած կովին մի մոտանար, թե չէ հարու կտա ...կկծի. յաղու կտա-քեզ կպատառի, քեզ կքրքրի»⁵⁵:

Իրեն կուլից, «գավիից» հեռու պահող և բռնությունների դեմ ստրկական յոռություն հորդորող այդ քամելեռններին Աբովյանը պատասխանել է. «Տո ավանակ... իշի գլուխ... վարպետ եմ, հո կարպետ չեմ, որ գլխիս խփեն, ձեն չհանեմ, մեկ քանի գլուխ էլ՝ ես կցխեմ»⁵⁶: Դրանից հետո նա ցույց է տվել «ցեխման» բռնակալությունը մերկացնելու, նրան հեզնելու և կծու ծաղրանքի ենթարկելու իր մեթոդը: «Չէ, չէ,—գրել է նա,—էդ բան չի դառավ (կատաղած գազանի աչքը հանելու համար վզին չեմ տրաքացնի—Վ. Ղ.), էշը կղռա (այսինքն՝ գրաքննիչը կմատնի—Վ. Ղ.), միրուքը սանդրի, յալը սղալի (բաշը շոյի—Վ. Ղ.), աչքերը թոզ ածա, որ քոռանա, քեզ շտեսնի, եղո ինչ ուզում ես արա, էդպես մի անիր»⁵⁷: Սա նույն միտքն է, ինչ միաժամանակ «Վերք»-ի ստեղծման նույն 1841 թ. առանձին հրատարակությամբ լույս տեսած «Մեր ժամանակի հերոսը» գրքի հայտնի առաջաբանում արտահայտեց Լեւոնտովը: Նա մեծ ցավ է հայտնում, որ՝ «Մեր հասարակությունը այնքան երիտասարդ է և պարզամիտ, որ... դեռևս չգիտե, թե կարգին հասարակության մեջ և օրինավոր գրքերում ականերն լուտանքը չի կարող տեղ ունենալ, որ ժամանակակից կրթությունը հնարել է ավելի սուր, համարյա անտեսանելի, բայց և մահացու մի զենք, որը շողորթություն հանդերձի տակ անվրեպ ու ստույգ հարված է հասցնում: Մեր հասարակությունը նման է այն գավառացուն, որը թշնամի արքունիքներին պատկանող երկու դիվանագետների խոսակցությունը լսելով համոզված կմնար, թե նրանցից յուրաքանչյուրը հօգուտ փոխադարձ, ամենաքնքուշ բարեկամության խաբում է իր կառավարությանը»⁵⁸: «Շողորթություն» այդպիսի մի հանդերձ էլ Աբովյանն է հագցրել իր «Վերք»-ին: Ցարապաշտական պատրանքի տակ նա ցարին ու նրա կառավարությանը անարգանքի սյունին է դամել, ինքն էլ աստիճանավորների թավուտ անտառից ձայնը ժողովրդին հասցնելու համար թաքնվել տողերի արանքում:

Եվ այդ արել է առերևույթ «անտեսանելի զենքեր» ընձեռող և «առայծմ ժողովրդի համարյա ամբողջ մտավոր կյանքը իր մեջ կենտրոնացնող գրականության» (Չերնիշևսկի) միջոցով, որովհետև գրական հնարանքները հատուկ են միայն գրականությանը, պատմությունը այն չի ընդունում: Ահա թե ինչու է խոսելով «Վերք»-ի ստեղծման պատմության մասին, Աբովյանը Բոգենշտեդտին գրել. «Իմիջիայլոց, գրականության նկատմամբ էլ ես անտարբեր չեմ»⁵⁹, որ նշանակել է՝ թե մյուս, գործնական միջոցառումները անհաջողության մատնե-

⁵³ Նույն տեղում, հատ. 4, էջ 47:

⁵⁴ Նույն տեղում, հատ. 3, էջ 68:

⁵⁵ Նույն տեղում, էջ 215:

⁵⁶ Նույն տեղում, հատ. 4, էջ 47:

⁵⁷ Նույն տեղում, հատ. 3, էջ 245:

⁵⁸ М. Термонтов, Герои нашего времени, 1962, էջ 3:

⁵⁹ ԽԱ, ԵԼԺ, հատ. 7, էջ 391:

վելուց հետո ելքը գրականության մեջ է գտել: Բայց ի՞նչ ձևով այն մատուցելը ժողովրդին: Ահա ևս մի նոր հարց, որովհետև հայերեն հրապարակի վրա եղածը աստծո, եկեղեցու ու սրբերի մասին է, իսկ եվրոպականն էլ անհարմար ու անբնական է թվում հայ ժողովրդին, որովհետև դա անհամապատասխան կլիներ նրա գաղափարներին ու զգացմունքներին:

Տակավին ուսանող ժամանակ է Արուսյանը գրել, թե ժամանակակից գիտության մակարդակով պատմություն (կամ գրականություն) գրելու օրը հայերի համար դեռ չի հասել, որովհետև նրանց դեռ երկար ժամանակ է պետք կրթվելու և նման բաները գնահատելու համար⁶⁰: «Ես էլ էի ուզում՝ որ ինձ վրա շփոթադին,— գրել է Արուսյանը «Վերք»-ի առաջաբանում,— ...ես էլ էի ուզում, որ ասեն. «Օ՜հ, էնպես խորք. խրթին շարադրել գիտի, որ սատանեն էլ միջիցը մեկ բառ չի կարող իմանալ, հասկանալ», ևս էլ էի ուզում, որ իմ գլուխը ցույց տամ... ու մեկ լեզու գիտի, ևս մեկ քանիսը գիտեմ, ինչ գիրք ասես՝ որ չեմ սկսել թարգմանիլ ու կիսատ լիողալ...»⁶¹:

Այս խոստովանությունը սնափառ պարծենկոտություն չէ և ոչ էլ ուրիշներին երևալու ցուցամոլություն, մի բան, որ շափաղանց հեռու էր Արուսյանից: Դա պարզապես իր առաքելությունն ու կարողությունները գիտակցող, բայց և դրանք զրոհորելու հնարավորություններ չունեցող մեծ անհատի բողոքն է: Մի ծայրով այն ուղղված է հայ իրականության մեջ գիտականը, բարդը ընկալող հասարակության բացակայության, մյուս ծայրով՝ այդպիսին ստեղծելու հնարավորություններից իրեն զրկողների դեմ: Գրականությունը, իհարկե, ցարական զբաղմունքների խուզարկու աչքից խուսափելու ավելի լավ միջոցներ կարող էր տալ Արուսյանին: Նա կարող էր այդքան տանջանքների գնով իր բոլոր ասածները հաղորդել մի մտավորական հերոսի լեզվով: Բայց կհասկանա՞ր արդյոք հայ ընթերցողը այն ժամանակ, երբ Գերցենի վկայությամբ (համենայն դեպս՝ Ռուսաստանի մայրաքաղաքներում) Բելինսկու հոգվածը կրող ամսագրերը կլանող, ձեռքից ձեռք անցկացնող ընթերցող հասարակության առկայության դեպքում նույնիսկ լերմոնտովը դանդաղում էր իր ընթերցողներից, թե նրանք առակը չեն հասկանում, եթե նրա վերջում բարոյախոսություն չկա:

Այդ է եղել պատճառը, որ վտանգելով իր անձը, մեծ անհատներին հատուկ խիզախությամբ Արուսյանը իր վեպում հանգես է եկել ոչ թե որպես դատախազ, այլ կասեինք՝ իրիկական հերոս: Անգամ այդպես անելուց հետո էլ նա հառաչել է. «Ա՛խ, երբեք ասածս տեղ կհասնի, թե հետո գերեզմանը կերթա, ու հուլումն էլ ոսկերքս կմաշի, կտանջի»⁶², կամ. «Վայ նրանց զխին, ով ասածս ուրիշ տեսակ կմեկնեն»⁶³: Այդ պատճառով է նա հույսը ասպագայի վրա դնելով գրել. «Հալբաթ մեկ օր էլ արև դուս կգա, էն վախտն կիմանան, թե ուզածդ ինչ ա»⁶⁴:

Արուսյանը պարզ գիտակցել է, որ նիկոլանյան ռեժիմի պայմաններում ցարին նախատող յուրաքանչյուր որ պանդուխտն է այն երկրի, ուր ամեն ինչ դողում է նրա առաջ, և թե ինչ է սպասում իր նմաններին: Իր շուրջը կատարվող

60 Տե՛ս նույն տեղում, հատ. 8, էջ 33:

61 Նույն տեղում, հատ. 3, էջ 2:

62 Նույն տեղում, էջ 111 և 293:

63 Նույն տեղում, էջ 239:

64 Նույն տեղում, հատ. 2, էջ 191

քաղաքական անց ու դարձի խորաթափանց ընկալման գիտակցությունից և ոչ թե վախկոտությունից է նա գրել. «Որ լսում էի՝ թե մեկ մարդի պատիժ տվին, յա բանգը գցեցին, որ ասում էին՝ թե Ռուսաստանիցը մեծ մարդ ա եկել, որ մեր երկրի ահվալն քննի, իմանա, որ կուսակալիցը, յա նախարարիցը (մինիստրիցը) մեկ թուղթ էր գալիս, որ կառավարությունիցը (գիրեկցիցը) ստորոժը գիրքը կոնատակին աչքիս շէր երևում, էնպես էի սարսափում, կարծում թե էս ա իմ վերջի օրը հասել, մոտեցել ա, իմ արած շարությունը լիս ընկել, Պետերբուրգ, Մոսկով, Թիֆլիզ ինձանից գանդատով լցրել են... ինձ պետք է՝ տանեն սաղ սաղ թաղեն, յա կախ տան»⁶⁵։ Նրա խոսքը իր կատարած ո՞ր «շարության» մասին է, եթե ոչ քողարկված հակացարական պայքարի, որի «լիս ընկնելու» դեպքում հինգ դեկաբրիստների նման կախաղան բարձրացվելու պատկերը նրա աչքի առաջ էր միշտ։ Պատահական չէ նաև, երբ «Վերք»-ում պայքարի իր մեթոդի մասին խոսելուց հետո նա գրում էր. «Վայ քո տղիս տղա, էս ո՞ւր հասա. հենց ձիս քշում եմ ու շեմ մտիկ անում, թե եղևիս մարդ կա թե չէ»։ Բայց պայքարի ներքին մղումը նրան արիացնում և ներշնչում էր նաև կորովի տողեր. «էհ, նալաթ շար սատանին. էս էլ մեկ ջահելություն էր, գլուխս կկտրեն, հո հոգիս չեն առնիլ։ Իմ մուրաղը հանեմ, իմ ազգի թշնամու լերդը ճղեմ—եգո թող ինչ ուզում են, անեն»⁶⁶։

Գիտակցելով հանգերձ սպասվող վտանգը, Աբովյանը իրեն հատուկ մեծ համառությամբ շարունակել է պայքարը, որովհետև «չունքի հանաք մասխարություն չի, էսքան հրաշք տեսնիլ աչք ու բերան բռնիլ, ոչինչ չասիլ, կամ սուս ու փուս կշտովն անց կենալ»⁶⁷, այսինքն՝ այլևս անկարող է մյուսների նման այդքան անարդարությունների կողքով անտարբեր անցնել, որովհետև «լեզուս չի որ խոսում է, հոգիս չի, որ գգում ա... իմ հայրենիքն ա առաջիս քանդվում... իմ ախպոր աղի արտասուքն ու դառն լացն ա սիրտս էրում, խորովում, ինչպես բերնիս հուփ տամ, բերնիս հուփ էլ տամ, արինս ա քթովս դուրս գալիս...»⁶⁸ և այլն։

Այսպիսով, Աբովյանը, գնահատելով ուս ժողովրդի հազարավոր զավակների արյան գնով պարսկա-օսմանյան անտանելի բռնակալություններից իր հայրենիքի ու հայրենակիցների մի մասի փրկումը, ցույց տվեց հայ ժողովրդի բռնած ուսական կողմնորոշման ճշմարտացիությունը։ Միաժամանակ դարի կրթության ընձեռած միջոցներով գրած իր «Վերք Հայաստանի»-ն նա ուղղեց ցարական կառավարության ռազմա-քաղաքական և ժողովուրդներին խավարի մեջ պահելու ճորտատիրական, գաղութային քաղաքականության դեմ։

65 Նույն տեղում, հատ. 4, էջ 20—21։

66 Նույն տեղում, էջ 245։

67 Նույն տեղում, էջ 68։

68 Նույն տեղում, էջ 293։

НЕКОТОРЫЕ ВОПРОСЫ ИДЕЙНОГО СОДЕРЖАНИЯ
«РАН АРМЕНИИ» ХАЧАТУРА АБОВЯНА

В. ДЖ. ГАЗАРЯН

(Р е з ю м е)

Анализируя роман Хачатура Абовяна «Раны Армении», автор приходит к выводу, что этот роман, будучи в основном направленным против персидских и турецких захватчиков, в то же время в завуалированной форме подвергает критике колониальную политику царского правительства в Армении.